

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2018 թվականի
ապրիլի 12 -ի N 405 - Ն որոշման

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿԵՐԸ

I. ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Նախագորակոչային տարիքի (14-15 տարեկան, 16-18 տարեկան, զինվորական հաշվառում) քաղաքացիների բժշկական հետազոտությունները ներառում են՝

- 1) արտաքին մարմնական զննումը.
- 2) մարդաչափությունը.
- 3) արտաքին շնչառական ֆունկցիայի որոշումը (սպիրոմետրիա)՝ բժշկական ցուցումի դեպքում.
- 4) ուժաչափությունը (դինամոմետրիա)՝ բժշկական ցուցումի դեպքում.
- 5) ֆյուրոբոգրաֆիա կամ կրծքավանդակի օրգանների ռենտգեն հետազոտությունը.
- 6) արյան խմբի և ռեզուս պատկանելության որոշումը.
- 7) մեզի և արյան ընդհանուր քննությունը.
- 8) էլեկտրասրտագրումը.
- 9) որովայնի օրգանների ՈւՉ հետազոտությունը.

10) կանխարգելիչ պատվաստումները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված պատվաստումների ազգային օրացույցի:

2. Զորակոչային տարիքի (18-27 տարեկան՝ ներառյալ պարտադիր զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրված և 27 տարին չլրացած, ինչպես նաև 27 տարեկանից հետո՝ օրենքով սահմանված կարգով զորակոչի ենթակա) քաղաքացիների բժշկական հետազոտությունները ներառում են՝

- 1) արտաքին մարմնական զննումը.
- 2) մարդաչափությունը.
- 3) արտաքին շնչառական ֆունկցիայի որոշումը (սպիրոմետրիա).
- 4) ուժաչափությունը (դինամոմետրիա).
- 5) միկրոպրեցիպիտացիայի ռեակցիան.

6) արյան խմբի և ռեզուս պատկանելության որոշումը (եթե կատարված չէ), որի վերաբերյալ գրառումը պարտադիր կատարվում է զինվորական գրքույկում.

7) ֆյուտրոգրաֆիա կամ կրծքավանդակի օրգանների ռենտգեն հետազոտությունը.

8) մեզի և արյան ընդհանուր քննությունը.

9) էլեկտրասրտագրումը.

10) որովայնի օրգանների ՈՒՁ հետազոտությունը.

11) տուբերկուլինային մաշկային փորձը.

12) կանխարգելիչ պատվաստումները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված պատվաստումների ազգային օրացույցի:

3. Նախագորակոչային և գորակոչային տարիքի քաղաքացիների պատվաստումների՝ ժամանակին և ամբողջական կատարման համար պատասխանատու է քաղաքացու հաշվառման ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության ղեկավարը, իսկ ընդհանուր գործընթացի համակարգումը, համաճարակաբանական դիտարկումը և վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով համատեղ միջոցառումներ:

II. ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ՝ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՈՒԺՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. Սոմատիկ քրոնիկ հիվանդությունների կանխարգելիչ պլանային բուժում (ոեմիսիայի շրջանում)՝ նեֆրոլոգիական, թոքաբանական, գաստրոէնտերոլոգիական, նյարդաբանական, քիթ-կոկորդ-ականջաբանական, ակնաբուժական, մաշկային եզակի օջախային

2. Փոքր (ոչ բարդ) վիրաբուժական միջամտություններ պահանջող հիվանդություններ

3. Ստոմատոլոգիական՝ թերապևտիկ և վիրաբուժական հիվանդություններ

4. Սուր՝ թերապևտիկ ուղղվածություն ունեցող հիվանդություններ, որոնք չեն պահանջում շուրջօրյա հսկողություն և բուժման երկրորդային մասնագիտացված մակարդակ

5. Ներլոլոգիական հիվանդությունների վերականգնողական բուժում

III. ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՈՒԺՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. Վիրաբուժական հիվանդություններ

2. Սեռավարակներ և մաշկային հիվանդություններ

3. Հոգեկան հիվանդություններ

4. Ուռուցքաբանական հիվանդություններ

5. Տուբերկույոզ

6. Վարակիչ հիվանդություններ

7. Մասնագիտացված բուժօգնություն և շուրջօրյա հսկողություն պահանջող

հիվանդություններ

8. Արյունաբանական հիվանդություններ

9. Քրոնիկ հիվանդությունների սրացում

IV. ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋԻ ՎԱՂ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ՝ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ-ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

1. Տուբերկույոզի կանխարգելման և վաղ հայտնաբերման նպատակով, նախագորակոչիկների ու գորակոչիկների նկատմամբ, անկախ տուբերկույոզին բնորոշ գանգատների, կատարվում են հետևյալ հետազոտությունները՝ ՄԱՆՏՈՒ 2 ՏԵ (TE) փորձը, խորխի (առկայության դեպքում) եռակի բակտերիոսկոպիա, ռենտգենաբանական հետազոտություն (եթե կա անհրաժեշտություն՝ նախորդ երկու հետազոտությունների տվյալներից ելնելով):

2. Կատարված հետազոտությունների արդյունքում տրվում է անձի առողջական վիճակի վերաբերյալ հետևյալ եզրակացություններից մեկը՝

1) ԱՌՈՂՋ.

2) ԿԱՍԿԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ եթե խորխի քննությունը և ֆյուորոզրաֆիկ հետազոտության արդյունքները նորմայի սահմաններում են, իսկ ՄԱՆՏՈՒ-ի փորձը դրական է (հիպերերգիկ ռեակցիա 17 մմ և ավելին): Այս դեպքում կազմակերպվում է լրացուցիչ հետազոտություն հակատուբերկույոզային դիսպանսերում.

3) ՀԻՎԱՆԴ՝ եթե կատարված հետազոտությունների արդյունքում ախտորոշվել է «Տուբերկույոզ»:

3. 18-27 տարեկանը լրացած, ռիսկի խմբին պատկանող զինապարտները ենթակա են համապատասխան բժշկական հետազոտությունների՝ մարդու իմունային անբավարարության վիրուսի (ՄԻԱՎ) և ձեռքերով իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) հայտնաբերման, կամ ժխտման նպատակով: Ռիսկի խմբին պատկանող անձինք են համարվում՝

- 1) շրջապատում տուբերկույոզով հիվանդի հետ կոնտակտ ունեցող անձինք.
- 2) ռեսպիրատոր և ինտոկսիկացիոն ախտանիշներով հիվանդները.
- 3) թերսնուցման կամ ֆիզիկական թերզարգացման ախտանիշով տատապող անձինք.
- 4) շաքարային դիաբետով հիվանդ անձինք:

4. Նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց մոտ զինվորական կոմիսարիատների բժիշկների կողմից հիվանդության հայտնաբերման դեպքում առողջական վիճակի նկատմամբ հսկողությունը, համակարգումը և տեղեկատվության փոխանցումն սպասարկման տարածքի ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություններ իրականացվում է համապատասխան զինվորական կոմիսարիատի ավագ բժշկի կողմից, գորակոչային հանձնաժողովի նախագահի (զինվորական կոմիսար) հսկողությամբ:

5. Տուբերկուլոզի ախտորոշման դեպքում հիվանդության առկայության մասին տեղեկացվում է նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային և մարզային կենտրոններին՝ հիվանդների հետագա հաշվառումը, դիսպանսեր հսկողությունը, կանխարգելիչ և համաճարակային միջոցառումների իրականացումը և բուժման արդյունքների մոնիթորինգը կազմակերպելու համար:

6. Տուբերկուլոզով հիվանդ զինապարտների բժշկական փորձաքննությունը մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իրականացվում է յոթից տասն օրվա ընթացքում:

7. Թոքային տուբերկուլոզի դեպքում պարտադիր կարգով իրականացվող հետազոտություններն են՝

1) արյան ընդհանուր հետազոտություն (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

2) թոքերի ռենտգենաբանական հետազոտություն (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

3) թոքերի շերտավոր նկար.

4) խորխի բակտերիոսկոպիկ հետազոտություն (հետագա գնահատմամբ՝ պարտադիր և 3 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

5) խորխի կուլտուրալ հետազոտություն (հետագա գնահատմամբ՝ 1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

6) ըստ ցուցումների՝ բարդացած ախտորոշման դեպքում թոքերի համակարգչային շերտագրում կամ մագնիսառեզոնանսային շերտագրում (1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում), պաթոմորֆոլոգիական նյութի ցիտոհիստոլոգիական հետազոտություն (հետագա գնահատմամբ՝ 1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում):

8. Արտաթոքային տուբերկուլոզի ձևերից պլևրայի և ներկրծքային ավշային հանգույցների տուբերկուլոզի դեպքում պարտադիր կարգով իրականացվող հետազոտություններն են՝

1) խորխի բակտերիոսկոպիկ հետազոտությունը.

2) արյան ընդհանուր հետազոտությունը.

3) թոքերի ռենտգենաբանական հետազոտությունը (նկարը պահպանել).

4) թոքերի շերտավոր նկարը (թոքարմատի մակարդակով).

5) պլերալ պունկցիա, հեղուկի արտահանում և պաթոմորֆոլոգիական նյութի ցիտոհիստոլոգիական հետազոտությունը (հետագա գնահատմամբ).

6) ըստ ցուցումների՝ բարդացած ախտորոշման դեպքում թոքերի համակարգչային շերտագրում կամ մագնիսառեզոնանսային շերտագրումը:

9. Արտաթոքային տուբերկուլյոզի ձևերից պերիֆերիկ տուբերկուլյոզային լիմֆադենիտի դեպքում պարտադիր կարգով իրականացվող հետազոտություններն են՝

1) արյան ընդհանուր հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

2) թոքերի ռենտգենաբանական հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

3) ավշային հանգույցների պունկցիա, պունկտատի ցիտոհիստոլոգիական հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

4) ավշային հանգույցների պաթոլոգիական նյութի բակտերիոսկոպիկ հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

5) ըստ ցուցումների՝ մեծացած ավշային հանգույցների սոնոգրաֆիկ հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում) և ավշային հանգույցների պաթոլոգիական նյութի կուլտուրալ քննություն (հետագա գնահատմամբ՝ 1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում):

10. Արտաթոքային տուբերկուլյոզի ձևերից միզասեռական համակարգի տուբերկուլյոզի դեպքում պարտադիր կարգով իրականացվող հետազոտություններն են՝

1) արյան ընդհանուր հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

2) թոքերի ռենտգենաբանական հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

3) մեզի ընդհանուր հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

4) մեզի և արյան պաթոմորֆոլոգիական նյութի բակտերիոսկոպիկ հետազոտությունը (1-3 պարտադիր և 1-3 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

5) երիկամների ռենտգենը, ուռոգրաֆիան (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

6) ցիստոսկոպիան (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում).

7) ըստ ցուցումների՝ մեզի և արյան պաթոմորֆոլոգիական նյութի կուլտուրալ քննությունը (հետագա գնահատմամբ՝ 1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

8) որովայնի օրգանների սոնոգրաֆիան (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

11. Արտաթոքային տուբերկուլյոզի ձևերից որովայնի մյուս օրգանների տուբերկուլյոզի դեպքում պարտադիր կարգով իրականացվող հետազոտություններն են՝

1) արյան ընդհանուր հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

2) թոքերի ռենտգենաբանական հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

3) որովայնի օրգանների սոնոգրաֆիան, ռենտգենաբանական հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

4) պաթոմորֆոլոգիական նյութի ցիտոհիստոլոգիական հետազոտությունը (հետագա գնահատմամբ՝ 1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

5) աղիների կոլոնոսկոպիան, ռենտգենաբանական հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

6) ըստ ցուցումների՝ կատարվում են պաթոմորֆոլոգիական նյութի բակտերիոսկոպիկ, կուլտուրալ հետազոտությունը (հետագա գնահատմամբ), կոխի փորձը, դիագնոստիկ լապարոսկոպիան (1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում), որովայնի պունկցիան։

12. Արտաթոքային տուբերկուլյոզի ձևերից ոսկրահոդային տուբերկուլյոզի դեպքում պարտադիր կարգով իրականացվող հետազոտություններն են՝

1) արյան ընդհանուր հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

2) թոքերի ռենտգենաբանական հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

3) ախտահարված ոսկրերի և հոդերի ռենտգենաբանական հետազոտությունը (ուղիղ և կողմնային պրոյեկցիաներով)։

4) պաթոմորֆոլոգիական նյութի բակտերիոսկոպիկ հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

5) պաթոմորֆոլոգիական նյութի ցիտոհիստոլոգիական հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

6) ըստ ցուցումների՝ բարդացած ախտորոշման դեպքում համակարգչային շերտագրումը կամ մագնիսառեզոնանսային շերտագրումը (1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում), պաթոմորֆոլո-

գիական նյութի բակտերեոսկոպիկ, կուլտուրալ հետազոտությունը (1-3 պարտադիր և 3 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

7) ախտահարված հողի պունկցիան՝ պունկտատի հետագա ցիտոմորֆոլոգիական հետազոտությամբ։

13. Արտաթոքային տուբերկուլյոզի ձևերից տուբերկուլյոզային մենինգիտի, մենինգոէնցեֆալիտի դեպքում պարտադիր կարգով իրականացվող հետազոտություններն են՝

1) արյան ընդհանուր հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

2) թոքերի ռենտգենաբանական հետազոտությունը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

3) ողնուղեղային պունկցիան։

4) ողնուղեղային հեղուկի բակտերիոսկոպիկ հետազոտությունը։

5) ողնուղեղային հեղուկի ցիտոլոգիական հետազոտությունը։

6) ըստ ցուցումների՝ բարդացած ախտորոշման դեպքում գլխուղեղի համակարգչային շերտագրումը կամ մագնիսառեզոնանսային շերտագրումը (1 պարտադիր և 1 լրացուցիչ՝ անհրաժեշտության դեպքում)։

14. Տուբերկուլյոզով հիվանդ զինապարտների նկատմամբ ՄԱՆՏՈՒ փորձը չի կատարվում։

15. Տուբերկուլյոզով հիվանդ և զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացու հետագա հիվանդանոցային, ամբուլատոր և վերականգնողական (առողջարանային) բուժումը կազմակերպվում է ըստ վերջինիս բնակության վայրի տեղակայված պոլիկլինիկաներում ստեղծված տուբերկուլյոզի դեմ պայքարի կաբինետների կողմից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 28-ի N 52 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած տուբերկուլյոզի դեմ պայքարի 2007-2015 թվականների ազգային ծրագրի և ծրագրի իրականացման ժամանակացույցի պահանջներին համապատասխան։

16. Հիվանդ զինապարտներին բուժման ավարտից հետո տրվում է դուրսգրման էպիկրիզ, որի մեկ օրինակը համապատասխան բժշկական կազմակերպության կողմից ուղարկվում է տարածքային զինվորական կոմիսարիատ։

V. ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՒԺՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Բժշկական հետազոտություն և բուժում իրականացնող հաստատություններ են՝

1) «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ

2) «Արմենիա» ՀԲԿ ՓԲԸ

- 3) «Էրեբունի» ԲԿ ՓԲԸ
- 4) «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ ՓԲԸ
- 5) «Երևանի Մ. Հերացու անվան ԵՊԲՀ հիմնադրամ» ՊՈԱԿ
- 6) «Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՍՊԸ
- 7) «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ
- 8) «Ս. Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» ՓԲԸ
- 9) ՀՀ ԱՆ «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի ԳԿ» ՓԲԸ
- 10) ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ
- 11) Երևանի քաղաքապետարանի առողջապահության վարչության «Հակատուբերկուլոզային դիսպանսեր» ՓԲԸ
- 12) «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
- 13) «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց
- 14) «Ավան» հոգեկան առողջության հենտրոն» ՓԲԸ
- 15) ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ
- 16) ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ
- 17) «Լ. Ա. Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ» ՓԲԸ
- 18) ՀՀ ԱՆ մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկական կենտրոն
- 19) «Պրոֆ. Ռ. Յոյանի անվան արյունաբանության կենտրոն» ՓԲԸ
- 20) «Դիագնոստիկա» ԲՄ ԲԲԸ
- 21) «Կապանի ԲԿ» ՓԲԸ
- 22) «Գորիսի ԲԿ» ՓԲԸ
- 23) «Գյումրու ԲԿ» ՓԲԸ
- 24) «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ
- 25) «Իջևանի ԲԿ» ՓԲԸ
- 26) ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 27) ՀՀ Արմավիրի մարզի «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ:

2. Քաղաքացիական բժշկական հաստատություններին, ըստ մասնագիտացման ուղղությունների, կցվում են տարածքային զինվորական կոմիսարիատներ՝ համապատասխան զինկոմիսարիատում զինվորական հաշվառման վերցված նախագորակոչային և գորակոչային տարիքի քաղաքացիների հետազոտումը կամ բուժումն իրականացնելու նպատակով՝ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով, յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև տվյալ տարվա փետրվարի 5-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ